

## Վ. Գ. ԿՈՐՈՒԵՆԿՈՆ ԸԱՅՆՐԵՆ

Ե. Բ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ռուս գրականության մեջ իր ինքնուրույն տեղն ունի նշանավոր գրող, հասարակական գործիչ Վ. Գ. Կորոլենկոն: Վ. Ի. Լենինը նրան համարել է «առաջադեմ գրող»<sup>1</sup>, իսկ Ա. Մ. Գորկին նրա մասին գրել է, որ «իր ամբողջ կյանքում Կորոլենկոն առաջ էր ընթանում հերոսի ուղիով՝ ամեն կերպ աշխատելով արագացնել այդ առաջընթացը»<sup>2</sup>:

Կորոլենկոյի ստեղծագործության թեման ռուս ժողովրդի և նրա դեմոկրատական ուժերի հերոսական պայքարն է ընդդեմ ցարական ինքնակալության և ռեակցիայի: Նրա ողջ ստեղծագործությունն ու անձնական կյանքը խիզախության և քաղաքացիական արիության օրինակ է, որը, Գորկու խոսքերով ասած, արթնացնում է «ռուս ժողովրդի նիրհած իրավագիտակցումը»<sup>3</sup>:

Վ. Գ. Կորոլենկոն նշանակալից հետք է թողել ոչ միայն ռուս գրականության և ընդհանրապես մշակույթի, այլև շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի գրական մտքի ու մշակույթի վրա: Հայ ընթերցողը սիրում է նրան ոչ պակաս, քան Գոգոլին, Տուրգենևին, Տոլստոյին ու Չեխովին: Կորոլենկոյի ստեղծագործություններով հայ ընթերցողը ավելի խորը ճանաչեց ռուսական կյանքը, ավելի մտերմացավ գրողի հերոսների՝ Յաշկայի, Ֆեոդոր Սիլինի, Մակարի, Վասիլի, «Տարօրինակ աղջկա» և շատ այլ «ժողովրդական խոսվարարների» հետ:

Հայ առաջադեմ միտքը Վ. Գ. Կորոլենկոյի ստեղծագործությունների թարգմանությունները դիտում էր ոչ այնքան որպես ազգային գրականության հարստացում, որքան որպես քաղաքական պայքարի կոչ՝ ընդդեմ ինքնակալության: Եվ պատահական չէ, որ նրա ստեղծագործությունները թարգմանել են Ալ. Շիրվանզադեն, Նար-Գոսը, Ա. Ադելյանը և ուրիշներ<sup>4</sup>:

Վ. Գ. Կորոլենկոյի ստեղծագործություններից առաջին անգամ հայերեն թարգմանվել է «Մենաքեմ Գամաղացու պատմությունը» խորագրով վիպակը, այն էլ երկու անգամ՝ նախ Թիֆլիսում, Հովհ. Հովհաննիսյանի ձեռքով և հրատարակվեց «Աղբյուր» ամսագրում (1888), և ապա՝ Պետերբուրգում, որի թարգմանչի ու լինելը տակավին անհայտ է: Այդ վիպակի նախընտրումը թարգմանության համար թերևս բացատրվում է նրանով, որ այն բովանդակության մեջ ու զաղափարական նպատակասլացությամբ շատ էր հոգեհարազատ հայ ընթերցողին:

<sup>1</sup> В. И. Ленин, Соч., т. 12, стр. 237.

<sup>2</sup> А. М. Горький, Собр. соч., М., 1951, т. 15, стр. 245.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>4</sup> Նախահոկտեմբերյան ժամանակաշրջանում թարգմանվել են՝ «Մենաքեմ Գամաղացու պատմությունը» (1888), «Գետնափորի երեխաները» (1889), «Մեր ժամկոչը» (1890), «Թաթախման գիշերը» (1894), «Կույր երածիշտը» (1900), «Անտառը խշշում է» (1901), «Կրակները» (1901), «Դատաստանի օրը» (1902), «Մակարի երազը» (1903), «Տարօրինակ աղջիկը» (1904), «Թագավորական իշխանության անկումը Ռուսաստանում» (1917) և այլ գործեր:

Բնագրի և թարգմանության համեմատությունը ցույց է տալիս, որ Հովհ. Հովհաննիսյանը գոալի շափով արդիականացրել է թարգմանության լեզուն, իսկ Պետերբուրգի հրատարակության թարգմանիչը, ընդհակառակը, պահպանել է բնագրի հնամենի ոճը: Հովհ. Հովհաննիսյանի մոտեցումը՝ արդիականացնել թարգմանության լեզուն և ոճը՝ հասկանալի է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ թարգմանությունը կատարվում էր մանուկների համար: Այդուհանդերձ, դիտական և արվեստի պահանջներից դատելով, նախընտրելի է Պետերբուրգում հրատարակված թարգմանությունը: Այս՝ երկրորդ թարգմանությունը հեղինակի վիպակի նկատմամբ հայ ընթերցողի ունեցած մեծ հետաքրքրության վկայություններից մեկն է (տպագրվեց 1901 թ., Թիֆլիսում, «Նոր-դարի» №№ 78, 79-ում): Թարգմանիչը Մելքոն Դանադյոզյանն էր Առաջին վարդապետ կեղծանվամբ: Թարգմանվել է վիպակի միայն առաջին մասը, որը մեր կարծիքով, բնագրային հնչեղություն ու երանգ ունի:

Կորոլենկոյի հայերեն թարգմանված երկրորդ ստեղծագործությունը՝ «Ստորերկրյա մանուկներ» վիպակն է, որը «Վատ շրջապատում» խորագրով առաջին անգամ հրատարակվել էր «Русская мысль» ամսագրում (1885 թ. դիրք 10), իսկ ուսերեն «Дети подземелья» վերնագրով տարբերակը տպագրվել էր «Родник» ամսագրում, որտեղ, հեղինակի թույլտվությամբ և անմիջական մասնակցությամբ, խմբագրությունը կրճատել էր վիպակը, հարմարեցնելով մանուկ ընթերցողների ճաշակին: Այս խմբագրված օրինակից էլ Կ. Մարտիրոսյանը վիպակը թարգմանել է հայերեն: 1896 թ. նույն կրճատված տարբերակը Ալ. Շիրվանդադեի թարգմանությամբ հրատարակվել է առանձին գրքույկով:

Կ. Մարտիրոսյանի թարգմանությունը անհաջող է: Կան վրիպումներ և բնագրային շեղումներ: Անհամեմատ ավելի հաջող է Շիրվանդադեի թարգմանությունը, ուր հայ ընթերցողին է փոխանցվել վիպակի գեղարվեստական շունչը:

1890 թ. Մոսկվայում, «Շանգես գրական և պատմական» ամսագրում (№№ 3—4) տպագրվում է նաև Կորոլենկոյի «Մեր Ժամկոչը» պատմվածքը (թարգմանիչն անհայտ է): Պատմվածքը թարգմանված է ամբողջությամբ և, կարելի է ասել, բավական հաջող: Թարգմանիչը կարողացել է պահպանել բնագրի պատկերավորությունը, գտնել ուսերենի մակդիրներին, համեմատություններին և այլաբանություններին համապատասխան հայերեն ճիշտ զուգահեռներ: Այդուհանդերձ, հայերեն թարգմանությունում առկա են որոշ վրիպումներ և անճշտություններ:

1894 թ. «Մուրճ» ամսագրում (№ 4) տպագրվում է Կորոլենկոյի «Թաթախման գիշերը» պատմվածքը՝ Գ. Վանեցյանի թարգմանությամբ: Երկու տարի անց, նույն ամսագրում նշված պատմվածքը տպագրում է Գ. Աստվածատրյանի թարգմանությամբ (1896, № 6):

Երկու թարգմանություններն էլ, ըստ էության, քիչ են տարբերվում միմյանցից: Գ. Վանեցյանը թեև առաջնորդվել է «ազատ թարգմանության» սկզբունքով, բայց, ինչպես պարզվում է համեմատությունից, բնագիրը՝ ներկայացրել է ամբողջությամբ, առանց օտարումների, լեզուն պարզ է և մատչելի:

Երկրորդ թարգմանիչը՝ Գ. Աստվածատրյանը, նույնպես հարազատ է մնացել բնագրին: Թվում է, սակայն, թե Կորոլենկոյի այս թարգմանությամբ



Մուշե վարդապետի այս, ինչպես նաև բազմաթիվ այլ թարգմանությունները, կատարված տարբեր հեղինակներից այլևայլ առիթներով, վկայում են նրա թարգմանական հմտության, մայրենի և ռուսաց լեզուների հիանալի իմացության, գործի նկատմամբ ունեցած բացառիկ լրջության ու պատասխանատվության մասին:

Հայերեն թարգմանության մեջ որակ չեն կազմում բնագրային շեղումներն ու թարգմանչի վրիպումները, իսկ թվացող անճշտությունները արդյունք են պարզապես կանխամտածված փոփոխությունների: Զուտ պատկերավորման, կոլորիտի վերստեղծման նպատակով թարգմանիչը հաճախ պահպանել է շարգմանվող բառերն ու արտահայտությունները, հատկապես ուկրաիներեն արտահայտությունները, միաժամանակ ջանալով տալ դրանց հայերեն բացատրությունները և հայերենում գտնել բնագրի այլևայլ արտահայտչամիջոցներին համապատասխան համարժեքներ:

Կորոլենկոն «Դատաստանի օրը» պատմվածքը գրել է 1890 թ.<sup>6</sup> մշակելով հրեական խապուն սատանայի մասին հայտնի լեգենդը: Խապունը դատաստանի օրը աղոթարանից մի հրեա է փախցնում: Այդ կտավի վրա էլ կառուցվել են պատմվածքի հետագա սյուժետային զարգացումը, կոնֆլիկտը՝ մի կողմից ռուս ջրաղացպան-կուլակի և մյուս կողմից՝ հրեա-վաշխառու ու պանդոկպանի միջև: Սյուժեն բարդանում է առաջինի՝ կնոջ նկատմամբ ունեցած անմարդկային դաժան վերաբերմունքով:

Մուշե վարդապետն իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է գլխավոր գործող անձանց՝ ջրաղացպանի և Յանկելի արտաքին ու ներքին դիմանկարը թարգմանության մեջ ճիշտ ներկայացնելու խնդրի վրա: Նա հայերենում ընտրել է համապատասխան այնպիսի բառ-արտահայտություններ, որոնցով բնութագրվում է ջրաղացպանի շահամոլությունը, նրա կեղծ բարեպաշտությունը, մարդկանց նկատմամբ ունեցած արհամարհանքը, ատելությունն ու անմարդկային վերաբերմունքը:

Այս պատմվածքի թարգմանության մյուս հաջողվածությունը հրեա սատանայի անվան՝ «Խտպուն» թարգմանությունն է, որը հայերենում դարձել է «Զանչող»<sup>6</sup>:

Սովետական շրջանում Վ. Գ. Կորոլենկոյից կատարված առաջին թարգմանությունը հրապարակվում է Երևանում, «Կարմիր արև» դասագրքում: Դա արդեն հայ ընթերցողին ծանոթ «Կրակներն» էր (դասագրքում թարգմանիչը նըշված չէ): Հետևյալ թարգմանությունը լույս է տեսնում դարձյալ «Կարմիր արև» դասագրքում՝ 1924 թ.: Դա մի հատված է «Կուլը երաժիշտը» վիպակից, որը թարգմանել էր Նար-Դոսը՝ «Կուլը տղան» խորագրով: 1937 թ. Երևանում տպագրվում է «Իմ ժամանակակիցի պատմությունը» գրքից մի գլուխ՝ «Գնված տղան» վերնագրով, որ թարգմանել էր Գ. Ավագյանը: Մի տարի անց՝ այդ նույն գլուխը, Գ. Բոգդանյանի թարգմանությամբ, առանձին գրքով տպագրվում է Դոնի-Ռոստովում:

<sup>6</sup> Կորոլենկոյի ստեղծագործությունների թարգմանական պատմության մեջ ուշագրավ են «Մշտկում» տպագրված՝ «Թագավորական իշխանության անկումը Ռուսաստանում» (1917 թ., № 124—135) և «Պատերազմ, հայրենիք և մարդկություն» (1918 թ., փետրվար, № 25—27, 31—33, 39, 45—52) հրապարակախոսությունները: Երկու հոդվածն էլ թարգմանել է Պետրոս Զաքարյանը՝ «Պ. Զ.» ստորագրությամբ:

Երկու թարգմանություններն էլ կատարված են «Իմ ժամանակակցի պատմությունը» գրքի «Ուլյանիցկին և զնված երեխաները» գլխից՝ Ս. Պոլլատի կողմից, 1927 թ., դյուրամատչելի դարձված օրինակի հիման վրա: 1947 թ. «Հայպետհրատ» հրատարակչությունը վերահրատարակեց «Կույր երածիշտը»՝ Մուշե Կարդապետի հին թարգմանությամբ: 1848 թ. նույն հրատարակչությունը լույս ընծայեց Կորոլենկոյի «Պատմվածքների ժողովածուն»՝ Վահե Միքայելյանի թարգմանությամբ:

«Անլիզու մարզը» վիպակում Կորոլենկոն նկարագրել է ամերիկյան կյանքը՝ աղքատությունն ու գործազրկությունը, նեգրերի ստրկությունը և ամենուր իշխող ոսկու թագավորությունը: Այս վիպակը Կորոլենկոյի հաջողված ստեղծագործություններից է և, միևնույն ժամանակ, հրապարակախոսության լավագույն օրինակ, որտեղ Կորոլենկոն դիմակազերծ է արել բուրժուական ազատության կեղծիքը, բացահայտել ամերիկյան կեղծ դեմոկրատիայի իսկությունը: Վիպակը հայերեն է թարգմանել Հ. Հարությունյանը (1954 թ.):

Թարգմանությունը հաջող է կատարված, շկան բառացի պատճենումներ, թարգմանիչը գրեթե միշտ կարողացել է գտնել ռուսերենին համապատասխան համարժեքներ: Վիպակը կարգացվում է դյուրությունամբ և ընկալվում է որպես ինքնուրույն ստեղծագործություն:

Հաջող են թարգմանված դարձվածքները: Չի պահպանված, սակայն, Մատվեյի «Дѣтство» մականունը, որ փոխաբերական իմաստով նշանակում է բարձրահասակ, նիհար մարդ: Թարգմանության մեջ այնպես է ստացվել, որ, կարծես, «դիշլոն» Մատվեյի ազգանունն է:

Միանգամայն այլ խնդիրներ է հետապնդել Կորոլենկոյի՝ «Վատ շրջապատում» վիպակի թարգմանիչ Վահե Միքայելյանը, որը մեծ երախտիք ունի Կորոլենկոյի ստեղծագործությունների թարգմանության գործում:

«Վատ շրջապատում» վիպակը մեզ տանում է դեպի քաղաքային աղքատության աշխարհը, որտեղ մարդիկ ապրում են մարդկային վատթարագույն պայմաններում: Վիպակի գլխավոր հերոսները երեխաներն են՝ անտուն թափառաշրջիկները, որոնք ծնված օրից կրում են աղքատության ու սովի ողջ դաժնությունը: Գրողը հանդես է գալիս որպես թշվառների կրքոտ պաշտպան՝ շատ նուրբ և հուզիչ կերպով նկարագրելով երեխաներին և նրանց անկեղծությունը: Վիպակի գլխավոր հերոսը կարողանում է գտնել մի իսկական ընկեր և անկեղծ սեր: Պատահական չէ, որ վիպակը տարիներ շարունակ մտել է դրպրոցական դասագրքերի մեջ և դարձել երեխաների համար ընթերցանության նյութ: Վիպակի հերոսների արարքներն ու գործողությունները, որոնք օժտված են մարդկային ազնիվ արժանիքներով, զարգանում են քաղքենիների և թուլակամների, զոհողության անընդունակ մարդկանց հետ ունեցած հակադրության ֆոնի վրա:

Բնագրի և թարգմանության համադրումը ցույց է տալիս, որ թարգմանիչը կարողացել է հայերենում գտնել ռուսերենին համահնչուն բառեր, դարձվածքներ և արտահայտություններ և դրանցով իսկ կերպարների գեղարվեստական կերպավորումը հասցնել հայ ընթերցողին:

Թարգմանիչը բացառիկ զգուշավորությամբ է մոտեցել բնագրին, պահպանելով լեզվական բոլոր նրբերանգները, արտահայտչամիջոցները, որոնք ռուս գրողին օգնել են հասնելու այս կամ այն կերպարի ամբողջականացման և ընդհանրապես գործը գեղարվեստական կատարելության հասցնելու խնդրում:

Մյուս թարգմանությունը Ա. Պ. Չեխովի բարձր գնահատականին արժանացած «Սոկոլինցին» պատմվածքն է, որը առաջին անգամ հայերեն է թարգմանել Ա. Հայրապետյանը: Թարգմանությունը կատարված է բարձր մակարդակով, պահպանվել է ստեղծագործության բանահյուսական հենքը՝ հագեցված յակուտական բնությունը պատկերող գեղարվեստական բազմաթիվ արտահայտչամիջոցներով: Թարգմանչուհին կուրորեն շի պատճենում բնագիրը, այլ հաճախ միջամտում է, փոփոխություններ կատարում, երբեմն հերոսի խոսելաձևը հարմարեցնելով հայերենին:

Կորուհնկոյի՝ «Իմ ժամանակակցի պատմությունը» վեպի առաջին մասը Մ. Քաջազնունին բավական հաջող է թարգմանել, պահպանելով գործի գեղարվեստական հնարանքները, արտահայտչամիջոցները և այլն: Ուշագրավ է հերոսի հոր կերպարը: Մ. Քաջազնունին հայերենի լեզվական արտահայտչամիջոցներով համոզիչ կերպով բացահայտում է այդ բնավորությունը:

Հաջող է ցույց տրված երեխայի բնավորության կազմավորումը, նրա վերաբերմունքը դեպի շրջապատը, բախումը ուսուցիչների հետ և, որ գլխավորն է, նրա վերաբերմունքը հասարակական խոշոր երևույթների՝ լեհերի ապստամբության նկատմամբ:

Այսպիսով, Կորուհնկոյի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների քննությունը ցույց է տալիս, որ հայ թարգմանիչները, աննշան բացառությամբ, կարողացել են հայերենի փոխանցել առաջին հերթին թարգմանվող գործերի գաղափարական բովանդակությունը: Դժվարությունները հաճախ հանդես են եկել բնագրային ոճը պահպանելիս, երբ թարգմանիչները համարժեքներ են որոնել լեզվա-ոճական այնպիսի հասկացությունների համար, ինչպիսիք են բարբառային բառերը, գոհակարանությունը, հասարակաբանությունը, առակավոր խոսքը, ասացվածքները և այլն, որոնք բացառապես ծառայում են կերպարի բազմակողմանի ամբողջականացման խնդրին:

Կորուհնկոյի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների սկզբնական շրջանում, կարելի է ասել, նկատելի են բառացի, երբեմն էլ անհաջող թարգմանության դեպքեր, սակայն հետագայում հայ թարգմանիչները խորացել են թարգմանվող գործերի գեղարվեստական առանձնահատկությունների մեջ և տվել ավելի բարձրորակ թարգմանություններ:

Այսպիսով, Կորուհնկոյի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների քննությունը մեկ անգամ ևս վկայում է, որ Կորուհնկոն հիրավի մեծ արվեստագետ է, մոտ ու հարազատ ոչ միայն ռուս ժողովրդին, այլև շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդին:

Կորուհնկոյի ստեղծագործությունը ավելի քան ութսուն տարվա կապ ունի հայ մշակույթի հետ: Եվ հայ թարգմանիչների ու գրականագետների առաջիկա խնդիրը պետք է լինի՝ Կորուհնկոյի ստեղծագործությունների լայն ժողովրդականացումը հայ ընթերցողների շրջանում:

## В. Г. КОРОЛЕНКО НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Н. Б. НЕРСИСЯН

## Р е з ю м е

В. Г. Короленко начал печататься с 1885 г., и уже в 1888 году на армянском языке был издан один из его рассказов «Сказание о Флоре, Агриппе и Менахеме, сыне Иегуды».

С этого времени периодически публикуются на армянском языке лучшие рассказы и повести писателя. На высоком уровне переведены: «Слепой музыкант» (пер. Муше Вардапет), «Убивец» (пер. Т. Иоаннисян), «Необходимость» (пер. А. Аделеян), «Огоньки» (пер. Р. Заргарян и Т. Иоаннисян), «Сон Макара» (пер. А. Атаян), «Дети подземелья» (пер. Ал. Ширванзаде) и др. Примечательным моментом в истории переводов произведений В. Г. Короленко явилась публикация двух его публицистических работ: «Падение царской власти в России» и «Война, отечество и человечество» (пер. П. Закарян).

Первый перевод из Короленко на армянский язык в советское время относится к 1923 году. Это рассказ «Огоньки» в учебнике Сурхатяна «Кармир арев» («Красное солнце») (переводчик не указан) и в том же учебнике отрывок из «Слепого музыканта» под названием «Слепой мальчик» в переводе Нар-Доса. В 1937 году была переведена небольшая глава из «Истории моего современника» под названием «Купленный мальчик» (пер. Г. Авагян). Затем появились «Без языка» (пер. А. Арутюнян), «В дурном обществе» (пер. В. Микаелян), «Соколинец» (пер. А. Айрапетян), «История моего современника» кн. I (пер. Качазнуни) и др.